ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» փետրվարի 2023թ. N 15-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 20-ի N 183-Ն հրամանով հաստատված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքի աշխատանքային տեղեկությունները, ինչպես նաև Իշխան Գասպարյանի 2023 թվականի փետրվարի 7-ի դիմումը՝ համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության դադարեցման մասին

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 լիցենզիայի և 2 ներդիրի գործողությունը սույն թվականի փետրվարի 13-ից, մասնավորապես՝

1) «Բիգ Սիթի» (ՀՎՀՀ՝ 04235994) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված № 17762 լիցենզիայի և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի № 17762-01 ներդիրի գործողությունը,

2) «Գալստյան հոլդինգ» (ՀՎՀՀ՝ 05547883) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված № 17701 լիցենզիայի և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի № 17701-01 ներդիրի գործողությունը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2/21/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ